Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 14-ի N 1010-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր – Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Գործողությունը	Գործողության նկարագրությունը	Կատարման ժամկետը	Պատաս-խանատու կառույցը	Վերստուգելի չափորոշիչը	Ֆինանսավոր-ման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1.	«Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի մշակում	1) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ ԷԵԲՊՆ), համագործակցելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) հետ, մշակում է «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենք՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի (այսուհետ՝ ԷՇՄ) և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների (այսուհետ՝ ԷԱՄ) ներդրման ընթացքում առաջ եկած խնդիրները:	2022 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ (համաձայնությամբ)	«Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
2.	Սակագների կառուցվածքի բարելավում	1) ՀԾԿՀ-ն սահմանում է 0,38 (0,22) կՎ լարման բաշխման ծառայությունների մատուցման սակագները:	2018 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ)	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն բարելավում է վերջնական սպառողների՝ ըստ լարման մակարդակների սահմանվող էլեկտրաէներգիայի սակագների կառուցվածքը՝ սակագների հաշվարկի ընթացքում հենվելով տվյալ լարման մակարդակի սպառողներին էլեկտրական էներգիա բաշխելու համար անհրաժեշտ միջինացված ծախսերի իրական մեծությունների վրա:	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման ժամանակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ)	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
3.	Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի ներդրման նախապատրաստում	1) ՀԾԿՀ –ն փոփոխություններ է կատարում էներգետիկայի բնագավառի լիցենզավորման կարգում և գործող լիցենզիաների պայմաններում, ինչպես նաև մշակում է լիցենզիաների պայմանների նոր օրինակելի ձևեր գործունեության նոր տեսակների համար՝ «Էներգետիկայի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներին համապատասխանություն ապահովելու նպատակով:	2018 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ)	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն փոփոխություններ է կատարում էներգետիկայի բնագավառի կարգավորվող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվությունների ձևերում կամ սահմանում է նոր ձևեր՝	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ)	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	

1	2	3	4	5	6	7
		«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին համապատասխանություն ապահովելու նպատակով:				
4.	Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին անցում	1) Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձը (այսուհետ՝ ԷԷՇՕ), համագործակցելով էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ ԷԷՀՕ) ու էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հետ, մշակում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրի կանոնների նախագիծը:	2019 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	նախագծի ներկայացում ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն քննարկում է ԷԷՇՕ-ի կողմից ներկայացված էլեկտրաէներգետիկան մեծածախ շուկայի առևտրի կանոնների նախագիծը և, համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ, հաստատում է այն:	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
		3) ԷԷՀՕ-ն, համագործակցելով ԷԷՇՕ-ի ու էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հետ, լրամշակում է էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին, ԷՇՄ-ի և ԷԱՄ-ի հայեցակարգին համապատասխանություն ապահովելու նպատակով:	2019 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	նախագծի ներկայացում ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ	
		4) ՀԾԿՀ-ն քննարկում է ԷԷՀՕ-ի կողմից	2019 թ.	ՀԾԿՀ	ՀԾԿՀ-ի որոշման	

1	2	3	4	5	6	7
		էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններում առաջարկված փոփոխությունները և, համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ, հաստատում է դրանք:	դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՀՕ, ԷԷՇՕ	ընդունում	
		5) ՀԾԿՀ-ն հաստատում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի պայմանագրերի նոր օրինակելի ձևերը:	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ), ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
		6) ԷԷՇՕ-ն գործարկում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին անցման համար ընտրված ծրագրային ապահովման փաթեթը և սկսում է դրա փորձնական կիրառումը՝ առանց էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների համար ֆինանսական պատասխանատվության կիրառման:	2020 թ. ապրիլի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ (համաձայնությամբ), ԷԷՇՕ, ԷԷՀՕ	փորձնական անցում շուկայի նոր մոդելին	
		7) ԷԷՇՕ-ն և ԷԷՀՕ-ն ապահովում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին ամբողջական անցումը:	2021 թ. հունվարի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ (համաձայնությամբ), ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ամբողջական անցում շուկայի նոր մոդելին	
5.	Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի նոր մոդելին անցում	1) ԷԷՇՕ-ն, համագործակցելով էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հետ, մշակում է էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրի կանոնների նախագիծը:	2019 թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	նախագծի ներկայացում ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
		2) ՀԾԿՀ-ն քննարկում է ԷԷՇՕ-ի կողմից ներկայացված էլեկտրաէներգետիկան մանրածախ շուկայի առևտրի կանոնների նախագիծը և, համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ, հաստատում է այն:	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
		3) ՀԾԿՀ-ն քննարկում է էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ ԷԲՑՕ) կողմից ներկայացված բաշխման ցանցային կանոնների նախագիծը և, համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ, հաստատում է այն:	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԲՑՕ (համաձայնությամբ), ԷԷՀՕ, ԷԷՇՕ	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
		4) ՀԾԿՀ-ն հաստատում է էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի պայմանագրերի նոր օրինակելի ձևերը:	2019 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ (համաձայնությամբ), ԷԷՇՕ, ԷԲՑՕ (համաձայնությամբ)	ՀԾԿՀ-ի որոշման ընդունում	
6.	Հեռանկարային զարգացման նոր ծրագրի մշակում	ԷԷՀՕ-ն, համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի, ՀԾԿՀ-ի, պետական այլ գերատեսչությունների ու շահագրգիռ կողմերի, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հետ, մշակում է Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր	2021 թ. հուլիս երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ (համաձայնությամբ), ԷԷՀՕ	հեռանկարային զարգացման նոր ծրագրի ներկայացում ՀՀ ԷԵԲՊՆ և ՀԾԿՀ	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
		հեռանկարային զարգացման ծրագիրը՝ հաջորդ տասնամյա ժամանակահատվածի համար:				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ